

1890

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԻՐ

ՕԳՈՍՏՈՍ

ՀԱՅԿԱԿԱՆ Ք

ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ

ՄԱՍԻՍ ԼԵՐԱՆ ԿՐԱՅ



ՆՅԵԱՆ տարուան Օգոստոսի ամսաթիւթին մէջ թարգմանաբար հրատարակելով Մարկով ուսու ճանապարհորդին և նորա ընկերաց ելքը ՚ի Մեծն Մասիս, յիշեցինք նորա մէկ վարմանալի և նորա, նշան պատահումը, այսինքն է, կարմրագոյն ճըճ. ևոյ կամ որդան մը գիւտն այնպիսի ահագին բար.

ձրութեան վրայ, զոր կոչեր է *Coccinella septempunctata*. Իսկ յԱմ. սաթերթիս կը հրատարակեմք այլով պատեհիւ մեր դարուն նշանա. ւոր բանասիրի և աշխարհագրի մ'ըրած բանաստեղծական և բարոյա. կան խորհրդածութիւնքը սոյն որդանս նկատմամբ:

Յետ խօսելու գեղեցիկ կերպով և ընդարձակօրէն Մեծ Մասիսին հրաշալեաց վրայ, կը յաւելունա. Այս ամէն մեծամեծաց և զարմա. նալեաց մէջ շատ աւելի վարմանալի կ'երևի ինձ և անոնց՝ որք բը. նութեան ամենափոքր երևութից մէջ իսկ՝ նորա Արարչին անհաս. մեծութիւնը և ամենիմաստ տեսչութիւնը կը սիրեն նշմարել, այն ա. մենափոքրիկ կենդանին կամ Որդն կաշմարտ, բաղդատելով զայն մանաւանդ երկնաբերձ Մասեաց մեծութեան հետ: Մարկով ուս


ճանապարհորդն լերան վրայ ելնելու միջոց 14,000' բարձրութեան վրայ գտաւ վերոյիշեալ կարմրագոյն որդնուկս. դեռ աւելի վեր ելնելով, 15,000' բարձրութեան վրայ՝ կոնաձև գագաթան ստորոտը գտաւ նոյն տեսակ ուրիշ մեծագոյն որդ մը՝ կարմիր դալկագոյն. յայտնի է, թէ ծանծաղ տեղերու մէջ գտաւ՝ իբրու սառամանեաց հովիտներուն մէջ, զոր պատրաստեր էր անոնց համար բնութեան Արարիչն։ Յիրաւի լերան բարձրութեան հետ բաղդատելով՝ ոչինչ մի է այս փոքրիկ կենդանիս, և անոր կարմրութեան կաթիլն՝ ոչինչ մի է լերան վրայ տարածուած ձեան ոնբաւութեան քով. սակայն այնքան բարձրութեան վրայ և այնպիսի ցրտութեան մէջ՝ յիրաւի շատ զարմանալի է անոր պատահումը։ Բանասէր կամ զբօսասէր մարդկանց մէջ ամենէն աւելի յանդուգներն՝ որչափ տառապանօք կը փորձեն ելնել Մասնաց գագաթը, և յետ այնքան երկար պատրաստութեանց, նեղութեանց և կենաց իսկ վտանգաւ՝ հազիւ քիչերը կը յաջողին հասնիլ մինչև գագաթը, և այն այլ մէկ վայրկեան մը։ Ուստի մարդուս միտքը կը ստիպուի հարցնել. ինչո՞ւ համար և ինչպէս արդեօք այդպիսի ամենափոքրիկ որդ մը ելեր բարձրացեր է հովերուն և մորիկներուն սահմանաց մէջ, ձեան և սառամանեաց ցրտութեան մէջ. արդեօք այն բարձրութեանց վրայ հետազօտելու համար ելեր է. և կամ, եթէ ծաղրական չ'երևին խօսքերս, կան արդեօք այդ ճճեաց մէջ ևս՝ ինչպէս մարդկանց մէջ մենասէրք ու մանք, որոնք զատուելով բազմութեան միջէն՝ առանձնական կեանք մը վարեն. կամ թէ, կը փախչին արդեօք մարդկանց շահասէր և ընչաքաղց աչքերէն, ծածկելով անոնցմէ բնութեան իրենց տուած պարգևը՝ գեղեցիկ կարմրութեան գոյնը, և ամայի տեղեաց մէջ կ'անցընեն ապահով իրենց կեանքը։— Այլ թերևս աւելի զարմանալի ևս ըլլայ այս որդին բախտը կամ վիճակը. այսինքն է, ոչ եթէ մարդիկ ներուն պէս վարէն վեր ելած ըլլայ, այլ լերան գագաթէն վար իջած ըլլայ Նոյեան ընտանեաց հետ. և մինչդեռ ուրիշ կենդանիք իջան սփռեանց Մասնաց ստորոտը, գուցէ այդ որդերէն ոմանք կամ անոնց սերմերէն ինկնալով և կ'պչելով լերան խորշերուն և ծերպերուն մէջ, հազարաւոր տարիներու միջոց՝ անընդհատ սերունդեամբ ձագերու և ձուերու, ամէն մարդկային տոհմերէ աւելի երկարատև մը ըլլալով, և ամէն բնիկ ազգայիններէ աւելի հաստատուն բնակութիւն ունենալով այնտեղ, հասեր են մինչև ներկայ ժամանակս. մինչդեռ շատ կենդանիներ կամ մարդկային տոհմեր՝ որք սերեր են տապանէն ելլողներէն, բոլորովին քիչուեր են, ոչ անոնց սերունդը և ոչ անունը հասեր են մեզի։ Բազմադարեան թագաւորութիւնք՝ որք տիրեր են մեծամեծ աշխարհաց, անհետացեր են երկրիս տակ. իսկ կարմիր շարժուն կէտ մի՝ անընդհատ յաջորդութեամբ ապրելով մեռունակ լերան մէկ խորշին մէջ, յարահուլով ժամանակին հետ զուգընթացեր է։

Այրարատ աշխարհին սեփականագոյն և հռչակաւոր բերքերէն մին
է՝ Որդն կարմրոյ, որուն գեղեցիկ կարմրատեսիլ գոյնն թէ զարդա-



րանաց և շքեղութեան կը ծառայէր, և թէ մեծ շահու աղբիւր էր
Հայոց համար. վասն զի այդ օգտակար ճճին՝ բնաւ չէր գտնուէր մեր.

ձաւոր աշխարհաց մէջ: Թէպէտ զանազան տեղերու մէջ շատ տե-
ռակներ կան այս որդիս, այլ յեւրոպա միայն լեհաստանի մէջ կը
գտնուի ընտիրը (*Coccus Polonicus*) և ամենէն աւելի նմանը հայկա-
կանին. իսկ Մեխիդոյէն առատութեամբ կը բերուի այս ճճիս, սա-
կայն աւելի փոքրագոյն է և ոչ շատ ընտիր: Հայկականը՝ զոր հիմակ
բնապատումը յիւրանաքեր (*Porphyrophora*) կը կոչեն, երկու տե-
սակ է. արուն՝ ճանճի ձևով է, իսկ էգը՝ որ բուն որդն է՝ տակի կող-
մէն տափակ է, վրայէն՝ կորընթարդ. արտաքին կողմէն՝ շառագոյն
կամ մութ կարմրագոյն, իսկ ներսէն՝ մանիշակագոյն, ուր կը տես-
նուին մանրիկ հատեր. զոր լուծելով տարրաքննութեամբ, կենդա-
նական նիւթ մը գուրս կու գայ, և ուրիշ իւղւոյն պարտաւ և քիչ
մը հոտաւէտ նիւթ. դարձեալ կ'արտադրի փոսփատ, քլորուտ, և այ-
լըն, և յատկապէս բոսորային նիւթը: Մեր պատմիչներէն ոմանք,
ինչպէս են խորենացի, Ղազար փարպեցի և այլք, կը հաստատեն
թէ այս ճճիներս այն բուսոց արմատներէն կ'ելլեն՝ որոց վրայ կը
տեսնուին. և այն բոյսը՝ մէկը սեզ կը կոչէ, իսկ այլ զը՝ եղեգմասեր
արմատներ, յորոց կը ծնանին որդերը: Արդի ստոյգ քննողները կը
կոչեն այն սեզը՝ *Pimpinella*, իսկ այլ բուսաբանք՝ *Poa-punges*, կամ



Որդն կարմրոյ

Aeluropus laevis, և ճախճային տեղերուն
մէջ գտնուածը՝ *Dactylis litoralis*: Ոմառ ա-
տեն բազմութեամբ կ'պած կը տեսնուին այն
ճճիները սէզերուն վրայ, և կարելի է ըսել
թէ բոյսերուն հետ մէկտեղ կը ծածկեն եր-
կրին երեսը. անոր համար դիւրաւ և առա-
տութեամբ կը ժողվեն օգտաւէրք, ինչպէս
կ'ըսէ փարպեցին, և կը չորցնեն զանոնք
պղպղի հատերու նման. վերջը ջրոյ կամ
ալքոլի մէջ լուծելով՝ այն հրաշալի ծիրանե-
փառ կարմիր գոյնը կ'արձրկեն, որ կը ծա-
ռայէ գունաւորելու կտաններ կամ ուրիշ
նիւթեր, ինչպէս նաև մագաղաթաց վրայ
գրելու, կամ ուրիշ արքունական կնքոց և
նամակաց, և սրբազան գրքերու մէջ զար-
դեր նկարելու համար, որուն յաճախ կը
պատահինք Հայոց կաթողիկոսաց կոնդակներու և թագաւորաց
հրովարտակներու մէջ, երբեմն այս ճճիներս կը գործածուին նաև
իւրու դեղ ցաւոց չիգրու և մկանանց:

Այրարատայ ամենէն աւելի յատուկ որդնաբեր սահմաններն են՝
երկու Մասիսներուն ստորոտը, խորվիրապի կողմերը, Երասխայ ա-
փունք, մանաւանդ հիւսիսային կողմը՝ Կարրի և Սարտարապատ վի-
ճակներն և Կոտայից գաւառն, Կաւուտ և պարարտ սկախառն եր-

կրին վրայ մեծապէս կ'աճի հայկական Սէզն, որոյ ցօղունները նիզակաձև մաշկօք կամ թեփերով կը տարածուին գետնին վրայ, և ու մանք սակաւ մի վեր բարձրանալով՝ տերեւներ և մանր ծաղիկներ կ'արձակեն: Յունիս ամսոյն՝ տերեւներուն անկեանց մէջ կը ծնանին կարմրոյ որդերը լողնաչափ մեծութեամբ. առջի բերան գետնին եւ ընտր կը մնան սէզներուն հետ մէկտեղ, և երբ արեգական ջերմութիւնը կ'աճի, վեր կ'ելլան կը կանգնին. և երբեմն այնքան առատ և հոծ կը գտնուին այս ճճիք, մինչև կարծես գետնին երեսը կարմրագոյն գորգ մը տարածուեր է: Այրարատեան կարմրոյ արու որդն սեւագոյն է, թափանցիկ թեւերով՝ վարդագոյն եզերներով, խոշոր աչքերով կամ բալմաշիայ, երկայն ոտքերով և երկայն պոչով, ասուի կամ մետաքսի նման ոլորկ և փայլուն. իսկ էգն՝ ձուաձև է և կարմրագոյն, կրկին մեծութեամբ արուին, վից մանր և թոյլ թաթերով, ուստի գրեթէ և օտքի վրայ իսկ չի կրնար կենալ:

Այրարատեան գաւառներէն զատ՝ մեր աշխարհին ուրիշ կողմեր ևս կը յիշուի այս կարմրոյ որդն. յարեմուտս՝ կարնոյ գաւառին մէջ, և արեւելեան կողմը՝ ի Մարանդ. այս յետինս կը յիշէ Շարտէն եւ թնկտաներորդ դարու մէջ:

ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆ «ՄԸ» ԿԱՄ «ՄԻ» ԱՆՈՐՈՇ ՄԱՍՆԸԿԻՆ



Բազմավէպ Հանդիսիս նախընթաց ամսաթերթերէն միոյն մէջ, առանց ստորագրութեան յօդուածիկ մի, (որոյ հեղինակն այլուստ քաջածանօթ է ինձ՝ իւր ոչ սակաւ հմուտութեամբ հայրենի լեզուիս), կ'անդրադարձնէր (էջ 15) լծէ որչափ պատշաճագոյն է մեր մասնակցեալ տեղ՝ մի ձևը՝ ի գործ վարել գրութեանց մէջ, որ ոչ միայն ընտրելագոյն է՝ իւր նոյնութեամբ գրութեան մի յետադաս մասնակցն, այլ նաև աւելի ներդաշնակ է քան զիսով ձայնն մը հնչման, մինչդեռ վերջինս ռամկական համարուած է. որ և, ըստ առաջարկութեան վերոյիշեալ յօդուածագրին, իսպառ շնչուելու է գրութեանց միջէն:

Բայտ մեր կարծեաց մը ձևն այդքան խիստ դատաւճռոյ մ'ենթարկելէն յառաջ պէտք էր նորա հայերէն լեզուի մէջ գործած խանգարմանց յանցանքն յառաջ բերել, և այնուհետև իբրև խորթ կամ անհարապատ ծնունդ և օտարամուտ տաղտկալի հիւր՝ արտաքսել զինքն իրաւապէս հայերէն լեզուի ասպարիզէն: Բայց ուղիղն ըսելով՝ բաւական ժամանակէ՝ ի վեր՝ ազգային օրագիր և պարբերական հրատարակութեանց մէջ ընդհանրապէս խոժոռ աչք միշտ կը նայուի այս մը ձևին վրայ, որոյ փոխանակ կը յաճախէ մի, սակայն առանց